Կ-1098[4]-03.06.2025-ՏՀ-011

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 150-րդ հոդվածը լրացնել նոր 7.1-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«7.1. «Ռիելթորական գործունեության մասին» օրենքի իմաստով անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից անշարժ գույքի կառավարման հանձնված գույքի հետ կապված գործարքներից ստացվող անշարժ գույքի սեփականատիրոջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով, իսկ հարկային տարվա ընթացքում ստացված անշարժ գույքի կառավարման հանձնված գույքի հետ կապված գործարքներից ստացվող եկամուտների հանրագումարը 60 միլիոն դրամը գերազանցելու դեպքում, գերազանցող մասի համար ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ եկամտային հարկ՝ տասը տոկոս դրույքաչափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում «(այդ թվում՝ անշարժ գույքի առք ու վաճառքի եւ (կամ) վարձակալության կամ անհատույց օգտագործման տրամադրման) ծառայություններ մատուցողները,» բառերից հետո լրացնել «ռիելթորկան, անշարժ գույքի կառավարման ծառայություններ մատուցողները,» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 407-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 6-րդ կետով.

«6) «Ռիելթորական գործունեության մասին» օրենքի իմաստով անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից անշարժ գույքը կառավարման հանձնելը:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունիսի 1-ին:

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1098[4]-03.06.2025-ՏՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության~~ 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային ~~ՀՕ-165-Ն~~ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 150-րդ հոդվածը լրացնել նոր 7.1-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«7.1. «Ռիելթորական գործունեության մասին» օրենքի իմաստով անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից անշարժ գույքի կառավարման հանձնված գույքի հետ կապված գործարքներից ստացվող անշարժ գույքի սեփականատիրոջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով, իսկ հարկային տարվա ընթացքում ստացված անշարժ գույքի կառավարման հանձնված գույքի հետ կապված գործարքներից ստացվող եկամուտների հանրագումարը 60 միլիոն դրամը գերազանցելու դեպքում, գերազանցող մասի համար ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ եկամտային հարկ՝ տասը տոկոս դրույքաչափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում «(այդ թվում՝ անշարժ գույքի առք ու վաճառքի եւ (կամ) վարձակալության կամ անհատույց օգտագործման տրամադրման) ծառայություններ մատուցողները,» բառերից հետո լրացնել «ռիելթորկան, անշարժ գույքի կառավարման ծառայություններ մատուցողները,» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 407-րդ հոդվածի 7-րդ ~~մասի 1-ին կետը~~մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 6-րդ կետով.

«6) «Ռիելթորական գործունեության մասին»~~ Հայաստանի Հանրապետության~~ օրենքի իմաստով անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից անշարժ գույքը կառավարման հանձնելը:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի ~~հունվարի~~հունիսի 1-ին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ «ՌԻԵԼԹՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» (Կ-1098-03.06.2025-ՏՀ-011/1), ««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[1]-03.06.2025-ՏՀ-011/1), ««ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[2]-03.06.2025-ՏՀ-011/1), ««ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[3]-03.06.2025-ՏՀ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[4]-03.06.2025-ՏՀ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[5]-03.06.2025-ՏՀ-011/1), ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[6]-03.06.2025-ՏՀ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[7]-03.06.2025-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՌԻԵԼԹՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» (Կ-1098-03.06.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-7-րդ, 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 7-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ, 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 2-րդ	Առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-7-րդ, 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 7-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ, 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 2-րդ մասի 10-րդ, 21-րդ (լրամշակված 20) հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերում ցանկացած հոլովաձեւով առկա «օրենք» բառից առաջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով	Ընդունվել է:	Ընդունվել է:

		մասի 10-րդ, 21-րդ (լրամշակված 20) հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետեր	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի վերնագրի վերաբերյալ կարգավորումները:		
2.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանեցնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի պահանջներին՝ այն է նախագծի նույն կետից հանել «մասնագիտացված» բառը՝ տարընթերցումներից խուսափելու նպատակով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ	Խմբագրական ճշգրտումներով պայմանավորված՝ առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «գործունեություն» բառը փոխարինել «ծառայություններ» բառով, հիմք ընդունելով նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կարգավորումները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «կառավարչի հետ» բառերից հետո լրացնել «, վերջիններիս կողմից» բառերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատվիրատուն ոչ թե ծառայություններ մատուցողն է, այլ ստացողը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ	Հայաստանի Հանրապետության կողմից որդեգրված թվայնացման ռազմավարության համատեքստում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			առաջարկում ենք ամրագրել, որ ռիելթորի որակավորման վկայականները տրամադրվում են էլեկտրոնային ձևաչափով, ուստի անհրաժեշտ է նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում «փաստաթուղթ» բառից առաջ լրացնել «էլեկտրոնային» բառը:		
6.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ	Խմբագրական ճշգրտումներով պայմանավորված՝ առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետում ներառել նաև անհատ ձեռնարկատերերի հարկ վճարողի հաշվառման համարի եւ գործունեության վայրի գրանցման պարտադիր պայման:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետ	Առաջարկում ենք նախագծով սահմանվող բոլոր վճարները, կանխավճարներն ու փոխանցումները կատարել բացառապես էսքրոու հաշիվների միջոցով, ինչի կապակցությամբ անհրաժեշտ է վերաշարադրել նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը, հանել 13-րդ հոդվածը, նախագծում խմբագրել հատուկ բանկային հաշվին վերաբերելի դրույթները, ինչպես նաև նշված փոփոխություններից բխող՝ 14–23-րդ հոդվածների համարակալումն ու դրանց նկատմամբ արվող հղումները բերել համապատասխանության:	Ընդունվել է:	Ընդունվել է:

8.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում են միասնական տեղեկատվական համակարգ՝ պատվիրատուի, իր իրավասությունների շրջանակում, մուտք գործելու եւ համակարգից օգտվելու հնարավորության վերաբերյալ կարգավորումները, մինչդեռ վերջիններս կրում են անորոշ բնույթ, ուստի բավարար հստակություն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք նույն մասից հանել 2-րդ նախադասությունը, իսկ 3-րդ նախադասությունում «իրավաբանական անձինք» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ պատվիրատուները» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մաս, 8-րդ հոդվածի 11-րդ մաս, 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ, 19-րդ (լրամշակված 18) հոդվածի 12-րդ մաս	Առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասում «օտարման» բառից հետո լրացնել «, վարձակալության» բառը, 8-րդ հոդվածի 11-րդ մասում «օտարված,» բառից հետո՝ «վարձակալության կամ» բառերը, 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում «օտարման,» բառից հետո՝ «վարձակալության,» բառերը, 19-րդ (լրամշակված 18) հոդվածի 12-րդ մասում «օտարված,» բառից հետո՝ «վարձակալության կամ» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաեւ նախագծի 9-րդ հոդվածի համաձայն՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ռիելթորական ծառայություններ են համարվում նաեւ վարձակալության հետ կապված գործարքների կնքման համար իրականացվող միջնորդավորված ծառայությունները:		
10.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մաս	Խմբագրական աշխատանքներով պայմանավորված՝ առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասի նախավերջին նախադասության մեջ «տեղեկատվական համակարգ» բառերից հետո լրացնել «սույն օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
11.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 7-րդ մաս	Միասնական տեղեկատվական համակարգում «Ստուգված է» և «Հաստատված է» կարգավիճակների արտացոլման դրույթների վերաբերյալ բավարար հստակություն ապահովելու նպատակով առաջարկում ենք՝ նախագծի 5-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. « Սույն մասով նշված «Ստուգված է» եւ «Հաստատված է» կարգավիճակները համակարգում արտացոլվում են այդ պահի դրությամբ առկա տվյալների հիման վրա՝ օր, ամիս, տարի եւ ժամի նշագրմամբ:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

12.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասեր	Խմբագրական աշխատանքներով պայմանավորված և մտքի անհիմն կրկնությունը բացառելու նպատակով՝ առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին նախադասությունում «շահագործման» բառից առաջ լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն մասի 3-րդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Միասնական տեղեկատվական համակարգում առկա անշարժ գույքն օտարվելիս, վարձակալության հանձնվելիս համակարգն ինքնաշխատ հեռացնում է այդ գույքի վերաբերյալ տեղադրված տվյալները:», ինչպես նաև նույն մասի 4-րդ նախադասությունում «մուտքագրվելուց» բառից հետո առկա «կամ» բառը փոխարինել «,» կետադրական նշանով, իսկ «փոփոխելուց» բառից հետո լրացնել՝ «կամ հեռացվելուց» բառերը: Միաժամանակ նույն հոդվածի 10-րդ մասից հանել վերջին նախադասությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13.	Կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 14-րդ (լրամշակված	Իրավական հստակություն ապահովելու նպատակով առաջարկում ենք նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում «/» կետադրական նշանը փոխարինել «կամ» բառով, իսկ 14-րդ (լրամշակված 13)	Ընդունվել է:	Ընդունվել է:

		13) հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետեր	հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետից հանել «եւ/» տառը և կետադրական նշանը:		
14.	Կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 13-րդ կետ	Նկատի ունենալով, որ նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 13-րդ կետով սահմանվում են պայմանագրում իրավաբանական անձի վերաբերյալ պարտադիր ներառման տվյալները՝ առաջարկում ենք նույն կետում «դեպքում՝» բառից հետո լրացնել «անվանումը» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
15.	Կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետ	Առաջարկում ենք նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետից հանել «ռիելթորական եւ անշարժ գույքի կառավարման հատուկ բանկային հաշվի տվյալները,» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված դրույթներն արդեն իսկ առկա են նույն մասի 5-րդ կետում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
16.	Կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի «ը» ենթակետ	Բավարար հստակություն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի «ը» ենթակետում «առկայությունը» բառից հետո ավելացնել «, մակերեսը,» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
17.	Կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածի վերնագիր	Նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրն իմաստային առումով առավել ճիշտ ձևակերպելու նպատակով՝ առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպություն, ռիելթոր (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հանդիսացող) և անշարժ գույքի կառավարիչ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) հաշվառվելու և հաշվառումից հանելու կարգը»:		
18.	Կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մաս	Առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասում «վկայականի պատճենը» բառերը փոխարինել «վկայականի հերթական համարը» բառերով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ռիելթորի որակավորման վկայականը տրամադրվելու է էլեկտրոնային ձևաչափով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
19.	Կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մաս, 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասում «սեփականատեր(եր)ը)», իսկ 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «մասնագետ(ներ)ի» ձեւակերպումներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի կարգավորումները՝ այն է, եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաեւ այդ բառի հոգնակիի վրա եւ ընդհակառակը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
20.	Կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածի 6-րդ մաս	Նախագծի 12-րդ հոդվածի 6-րդ մասում առաջարկում ենք «այն անձի անուն-ազգանունը» բառերը փոխարինել «ֆիզիկական անձի անուն-ազգանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ վերջինիս անվանումը,» բառերով՝ հաշվի առնելով այն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հանգամանքը, որ անշարժ գույքի կառավարման կազմակերպության, ինչպես նաեւ անհատ ձեռնարկատեր հանդիսացող անշարժ գույքի կառավարչի կողմից գույքի կառավարումը կարող է իրականացվել նաեւ ի շահ իրավաբանական անձի:		
21.	Կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածի 7-րդ մաս և 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ	Իրավական հստակություն ապահովելու և տարընթերցումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք նախագծի 12-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ նախադասության մեջ «ցուցումով» բառից առաջ, իսկ նախագծի 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում «անձանց» բառից հետո լրացնել «գրավոր» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
22.	Կառավարություն	Նախագծի 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 2-րդ մասի 8-րդ և 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետեր	Խմբագրական աշխատանքներով, մասնավորապես՝ նախագծի 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի եւ 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ միասնական տեղեկատվական համակարգ մուտքագրման ենթակա տեղեկությունների, փաստաթղթերի շրջանակի տարբերությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է նախագծի նշված կետերը համաձայնեցնել միմյանց:	Ընդունվել է:	Ընդունվել է:
23.	Կառավարություն	Նախագծի 14-րդ (լրամշակված 13)	Առաջարկում ենք նախագծի 14-րդ (լրամշակված 13) հոդվածի 3-րդ մասի 5-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետ	կետում «վաճառվել կամ հանվել է վաճառքից» բառերը փոխարինել « այլևս չի վաճառվում կամ վարձակալության չի տրամադրվում» բառերով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախագծի 5-րդ հոդվածի 9-րդ մասով արդեն իսկ նախատեսված է, որ միասնական տեղեկատվական համակարգում առկա անշարժ գույքն օտարվելիս, վարձակալության հանձնվելիս համակարգն ինքնաշխատ հեռացնում է այդ գույքի վերաբերյալ տեղադրված տվյալները:		
24.	Կառավարություն	Նախագծի 15-րդ (լրամշակված 14) հոդվածի 3-րդ մաս	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը՝ առաջարկում ենք նախագծի 15-րդ (լրամշակված 14) հոդվածից հանել 3-րդ մասը, քանզի վերջինս արդեն իսկ սահմանված է Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետով: Միաժամանակ առաջարկում ենք նաև ուղղել նշված հոդվածի մասերի համարակալումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
25.	Կառավարություն	Նախագծի 17-րդ (լրամշակված 16) հոդվածի 2-րդ և 23-րդ (լրամշակված 22)	Նախագծի 17-րդ (լրամշակված 16) հոդվածից հանել 2-րդ մասը՝ այն ներառելով նախագծի 23-րդ (լրամշակված 22) հոդվածի 6-րդ մասում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված դրույթը պետք է գործի սահմանափակ ժամկետով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		հոդվածի 6-րդ մասեր			
26.	Կառավարություն	Նախագծի 17-րդ (լրամշակված 16) հոդված	Նախագծի 17-րդ (լրամշակված 16) հոդվածի 2-րդ մասի հանելու հանգամանքով պայմանավորված՝ առաջարկում ենք ուղղել նույն հոդվածի համարակալումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
27.	Կառավարություն	Նախագծի 17-րդ (լրամշակված 16) հոդվածի 3-րդ (լրամշակման արդյունքում 2-րդ) մաս	Առաջարկում ենք նախագծի 17-րդ (լրամշակված 16) հոդվածի 3-րդ (լրամշակված 2-րդ) մասում «գեոդեզիական գիտությունների թեկնածու հանդիսացող» բառերը փոխարինել «գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն եւ կադաստր մասնագիտության գծով աշխարհագրական, տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող» բառերով՝ համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետությունում գործող գիտական աստիճանաշնորհման հասկացություններին եւ պահանջներին, միաժամանակ նույն մասը վերաշարադրել այնպես, որ ռոտացիոն կարգը վերաբերելի լինի նաև որակավորված ռիելթորներին, իսկ «առնվազն» բառը փոխարինել «առավելագույնը» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
28.	Կառավարություն	Նախագծի 18-րդ (լրամշակված 17) հոդվածի վերնագիր, 4-5-րդ	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ռիելթորի որակավորման վկայականը տրամադրվելու է	Ընդունվել է:	Ընդունվել է:

		մասեր, 21-րդ (լրամշակված 20) հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ	էլեկտրոնային ձևաչափով՝ առաջարկում ենք նախագծի 18-րդ (լրամշակված 17) հոդվածից հանել 4-րդ մասը, իսկ վերնագիրը, 5-րդ մասը, ինչպես նաև 21-րդ (լրամշակված 20) հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը լրամշակել, դրանցից հանելով որակավորման վկայականի կրկնօրինակին վերաբերելի դրույթները, ինչպես նաև նույն հոդվածի համարակալումն ուղղել:		
29.	Կառավարություն	Նախագծի 19-րդ (լրամշակված 18) հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետեր	Հիմք ընդունելով նախագծի 5-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումներն՝ առաջարկում ենք նախագծի 19-րդ (լրամշակված 18) հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «վաճառված կամ» բառերը փոխարինել «վարձակալության այլևս չտրամադրվող կամ» բառերով, ինչպես նաև նույն մասի 3-րդ կետում բավարար հստակություն արտացոլելու նպատակով նույն կետում «սույն» բառից առաջ լրացնել «մեկ օրացուցային տարվա ընթացքում» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
30.	Կառավարություն	Նախագծի 22-րդ (լրամշակված 21) հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	Իրավական կարգավորմանը բավարար հստակություն հաղորդելու և այդ կարգավորման սուբյեկտների շրջանակը չսահմանափակելու նպատակով՝ առաջարկում ենք նախագծի 22-րդ (լրամշակված 21) հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հանել «պատվիրատուին եւ/կամ երրորդ անձանց» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

31.	Կառավարություն	Նախագծի 23-րդ (լրամշակված 22) հոդված	Առաջարկում ենք նախագծի 23-րդ (լրամշակված 22) հոդվածին վերնագիր սահմանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
32.	Կառավարություն	Նախագծի 23-րդ (լրամշակված 22) հոդվածի 1-5-րդ մասեր	Նախագծի 23-րդ (լրամշակված 22) հոդվածում նոր լրացված 9-10-րդ մասերի բովանդակությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է կատարել տեխնիկա-իրավական ճշգրտումներ օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետներում՝ ապահովելով անցումային դրույթների լիարժեք կիրառություն, միևնույն ժամանակ նախատեսել նաև, որ նախագծի 3-րդ հոդվածը նույնպես ավելի վաղ է ուժի մեջ մտնելու:	Ընդունվել է:	Ընդունվել է:
33.	Կառավարություն	Նախագծի 23-րդ (լրամշակված 22) հոդվածի 8-րդ մաս	Նախագծով հետապնդվող նպատակի համատեքստում՝ առաջարկում ենք նախագծի 23-րդ (լրամշակված 22) հոդվածում ներառել անցումային դրույթ, առ այն, որ միասնական տեղեկատվական համակարգի հետ փոխգործելի անշարժ գույքի վաճառքի կայքերը նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված ժամկետում պարտավոր են իրենց կայքերում հրապարակված հայտարարությունները տարանջատել՝ ըստ «Ստուգված է» կարգավիճակ ունենալու եւ չունենալու:	Ընդունվել է:	Ընդունվել է:

34.	Կառավարություն	Նախագծի 23-րդ (լրամշակված 22) հոդվածի 9-րդ, 10-րդ և 11-րդ մասեր	Հաշվի առնելով, որ նախագծով ռիելթորի որակավորվման մասնակցության համար որպես պարտադիր պահանջ սահմանված է բարձրագույն կրթությունը, առաջարկում ենք նախագծի անցումային դրույթներով ոլորտի ներկայացուցիչներին ընձեռել հնարավորություն կապված բարձրագույն կրթության պահանջի հետ, մասնավորապես նախատեսել, որ Կադաստրի կոմիտեի ղեկավարը կհաստատի ռիելթորական գործունեության որակավորման քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ վճարովի վեցամսյա կրթական ծրագրեր, որոնք կկազմակերպվեն եւ կիրականացվեն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից, իսկ բարձրագույն կրթություն չունեցող այն ֆիզիկական անձինք, որոնք կմասնակցեն այդ ծրագրերին եւ կստանան այդ ծրագրերի մասնակցության հավաստագիր, կկարողանան այդ ծրագրերի մեկնարկից հետո բացառապես 2 տարվա ընթացքում մասնակցել ռիելթորի որակավորման քննության՝ առանց բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի: Միաժամանակ սահմանել դրույթ, առ այն, որ նշված հիմքով որակավորման վկայական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ձեռք բերած անձինք պարտավոր կլինեն հինգ ուսումնական տարվա ընթացքում ձեռք բերել բարձրագույն կրթություն եւ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո լիազոր մարմնին գրավոր կներկայացնեն հաջորդ կուրս տեղափոխվելու վերաբերյալ բարձրագույն ուսումնական հաստատությունից ստացված տեղեկանք, իսկ կրթություն չստանալու կամ տեղեկանք չներկայացնելու պարագայում վերջիններիս տրամադրված վկայականները կդադարեցվեն օրենքի ուժով:		
««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[1]-03.06.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածում «օրենքով» բառից առաջ առկա «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի վերնագրի վերաբերյալ կարգավորումները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Իրավական որոշակիություն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք նախագծի հոդված 1-ով լրացվող նոր 43. 1-ին հոդվածի վերնագրում «հանդիսացող» բառից հետո լրացնել «, ինչպես նաև միասնական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			տեղեկատվական համակարգում մուտքագրվող» բառերը:		
3.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող նոր հոդվածի կիրառումն ապահովելու նպատակով՝ անհրաժեշտ է նախագծում ներառել դրույթ՝ առ այն, որ նշված նոր լրացվող հոդվածով նախատեսված իրավունքների պետական գրանցման համար ներկայացվում են նաև նույն հոդվածով նախատեսված փաստաթղթերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 2-րդ (լրամշակված 3-րդ) հոդվածի 1-ին մաս	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի փոփոխմամբ պայմանավորված անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նաև նախագծի 2-րդ (լրամշակված 3-րդ) հոդվածի 1-ին մասում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«««ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[2]-03.06.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 16-րդ հոդվածը վերաշարադրվել է նոր խմբագրությամբ՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող փոփոխությունն իրականացնել նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետում:	Ընդունվել է:	Ընդունվել է:

2.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի փոփոխմամբ պայմանավորված անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նաև նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
««ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[3]-03.06.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի փոփոխմամբ պայմանավորված անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նաև նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[4]-03.06.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրենսգրքի վերնագրի վերաբերյալ կարգավորումները՝ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածը խմբագրել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածում «մասի 1-ին կետը» բառերը փոխարինել «մասը» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի կարգավորումները:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածում «օրենքի» բառից առաջ առկա «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված օրենքի վերնագրի վերաբերյալ կարգավորումները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մաս	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի փոփոխմամբ պայմանավորված անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նաև նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[5]-03.06.2025-ՏՀ-011/1),					
1.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի փոփոխմամբ պայմանավորված անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նաև նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[6]-03.06.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռիելթորի որակավորման վկայականը տրամադրվելու է էլեկտրոնային ձևաչափով՝ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածից	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հանել «կամ կրկնօրինակը ստանալու» բառերը:		
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով, որ առաջարկվող իրավահարաբերությունները նոր են և դեռևս գտնվում են ձևավորման փուլում, ինչպես նաև այն հանգամանքը, որ միասնական տեղեկատվական համակարգը նոր է ներդրվում և պահանջում է անցումային շրջան՝ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով «Պետական տուրքի մասին» օրենի 20-րդ հոդվածով նոր լրացվող 73-րդ մասի «ա» կետում՝ ֆիզիկական անձանց կողմից միասնական տեղեկատվական համակարգի միջոցով անշարժ գույքի վերաբերյալ տվյալների մուտքագրման համար սահմանված բազային տուրքի հնգապատիկի փոխարեն սահմանել բազային տուրքի չափ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի փոփոխմամբ պայմանավորված անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել նաև նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1098[7]-03.06.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի վերնագիր	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			5-րդ մասով սահմանված օրենսգրքի վերնագրի վերաբերյալ կարգավորումները՝ առաջարկում ենք նախագծի վերնագիրը խմբագրել:		
2.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» ձեւակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նախագծում «Օրենսգիրք» բառն այլեւս չի կիրառվում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում արդեն իսկ առկա են 169.33-169.35-րդ եւ 244.20-րդ հոդվածներ՝ առաջարկում ենք շտկել նախագծի 1-ին հոդվածում առկա համարակալման անճշտությունները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի փոփոխմամբ պայմանավորված անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նաև նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում:	Ընդունվել է:	Ընդունվել է: